

## ԿԱՐԾԻՔ

### Արփինե Արմենի Սիմոնյանի

**«Վանանդեցիների Ամստերդամի տպարանի հրատարակությունների գեղարվեստական հարդարանքը» թեմայով ատենախոսության վերաբերյալ, ներկայացված ԺԷ. 00.03- «Կերպարվեստ, դեկորատիվ և կիրառական արվեստ, դիզայն» մասնագիտությամբ արվեստագիտության գիտական աստիճանի հայցման համար**

Արփինե Սիմոնյանի «Վանանդեցիների Ամստերդամի տպարանի հրատարակությունների գեղարվեստական հարդարանքը» թեմայով աշխատությունը եզակի է իր նյութով և վերլուծական մակարդակով: Առհասարակ հետմիջնադարյան գրքային կերպարվեստը քիչ է ուսումնասիրված կամ գրեթե ուսումնասիրված չէ գիտական առումով, եթե հայ միջնադարյան գրքարվեստն առավել կամ պակաս չափով բավական ուսումնասիրված է ինչպես հայ, այնպես էլ այլազգի գիտնականների կողմից տարբեր մակարդակներով ու կողմերով, ապա Եվրոպական վերածննդի շրջանի արվեստը քիչ է ուսումնասիրված: Պատճառն այն է, որ միջնադարյան արվեստը գրավել է հայ և օտար մասնագետներին իր ոճերի և դպրոցների բազմազանությամբ՝ սկսած VI - VII դարերից մինչև իր ավարտը, մինչդեռ Եվրոպական վերածննդի շրջանի հայ արվեստը լրջորեն չի դիտարկված, քանի որ այն Եվրոպական վերածննդի արվեստի հետ մրցել չէր կարող և դիտարկվել է իբրև հետամնաց արվեստ:

Ինչպես ցույց է տալիս աշխատությունը Եվրոպական վերածննդի շրջանի հայ արվեստը թեև չէր կարող որևէ ձևով մրցել իտալական, իսպանական, հոլանդական արվեստների հետ, քանի որ հայերը զրկված էին որևէ պետականությունից, այնուամենայնիվ այն ուշադրության արժանի է որպես հայ արվեստի պատմության կարևոր անցման շրջան: Արփինե Սիմոնյանի աշխատությունը հաջողությամբ լրացնում է այդ բացը: Հեղինակը առաջին անգամ ցույց է տալիս, որ XVI-XVII դդ. հայ տպագրական արվեստը ստեղծողներն անմիջապես ամենազարգացած երկրներից են սովորել և հաջողությամբ յուրացրել նոր տպագրական գրքարվեստը՝ միաժամանակ յուրացնելով ինչպես իտալական և հոլանդական վերածննդի տպագրական փորձը, այնպես էլ հայ միջնադարյան գրքարվեստի: Այս գործում հատկապես մեծ է Վանանդեցիների աշխատանքը, որոնք գրքերի տպագրման և պատկերազարդման գործում օգտվում էին ոչ միայն հոլանդական և իտալական տպագրական արվեստից այլև՝ հայ մանրանկարչությունից: Այդ առումով աշխատությունը մեր իմացած առաջին լուրջ ուսումնասիրությունն է այդ բնագավառում, որը լուրջ ուշադրության չի արժանացել հայ արվեստի՝ վերածննդի շրջանի պատմության ուսումնասիրության մեջ: Առաջին լուրջ արվեստագիտական ուշադրությունը այդ մոռացված արվեստին ունեցել է բազմակողմանի արվեստաբան Մանյա Ղազարյանը, բայց մեր հեղինակը բավական հարուստ և բազմալեզու նյութերից մեծ և նորահունչ պատկեր է ստեղծում, որ շատ կարևոր է հայ արվեստի պատմության որոշակիորեն լրացման և հարստացման համար՝ օգտվելով նոր և հարուստ բազմալեզու աղբյուրներից, ինչը նրա աշխատանքի նկատմամբ մեծ վստահություն է հարուցում:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից՝ համապատասխան ենթագլուխներից, եզրակացություններից: Ատենախոսության բնագրին հաջորդում է օգտագործված ձեռագիր մատյանների, հնատիպ գրականության, ապա հայերեն և օտար լեզուներով հարուստ գրականության և էլեկտրոնային կայքերի և վերատպությունների ցանկը: Ատենախոսությանը հեղինակը կցել է հավելված, որտեղ խնամքով զետեղել է փորագիր պատկերների, դրանց հետ համեմատվող ձեռագիր օրինակների, որմնանկարների վերատպությունները, որոնք ուղեկցվում են տեղեկատվական գրություններով:

Աշխատության առաջին գլուխը, որը բաղկացած է երեք ենթագլուխներից նվիրված է **Ամստերդամի հայկական տպարանին և Վանանդեցիներին:** Ատենախոսն առանձին ենթագլուխներով մանրամասն անդրադարձել է հայ տպագրության սկզբնավորման, Ամստերդամի «Սուրբ Սարգիս և Սուրբ Էջմիածին» տպարանի հիմնադրման պատմությանը, հիմնադիր՝ Մատթեոս Ծարեցու, և նրան հաջորդած գործիչների՝ Ավետիս Ղլիճենցի, Ոսկան Երևանցու տպագրական գործունեությանը: Ապա Արփինե Սիմոնյանը քննության է առել Վանանդեցիների տպագրական գործունեությունը և հրատարակությունները, վեր է հանել այն կարևոր դերը, որ Վանանդեցիները ունեցել են ոչ միայն հայ տպագրության զարգացման գործում, այլ նաև հայագիտության տարածմանը Եվրոպայում:

Երկրորդ՝ **«Վանանդեցիների հրատարակությունների պատկերազարդման համակարգը»** վերնագրով, գլխում ատենախոսն առաջին անգամ առանձնակի ուսումնասիրել է Վանանդեցիների հրատարակությունների գեղարվեստական հարդարանքի մաս կազմող փորագիր զարդանախշերը: Քննության արդյունքում ակնհայտ է դարձել, որ վերջիններիս հրատարակություններում գեղարվեստական համակարգը հիմնականում ընդհանրական է: Համեմատական մեթոդով Արփինե Սիմոնյանը ներկայացրել է, որ Վանանդեցիների հրատարակությունների գեղարվեստական հարդարանքը մի կողմից ազդվել է հայ միջնադարյան մանրանկարչությունից, մյուս կողմից՝ ԺՁ-ԺԷ դարերի արևմտաեվրոպական տպագիր գրքերի նկարազարդումից: Ընդհանրական ձևով անդրադարձել է փայտե երկայնակի փորագրության (քսիլոգրաֆիայի) տեխնիկայի առանձնահատկություններին, Վանանդեցիների հրատարակությունների բաղկացուցիչ մասը կազմող թեմատիկ փորագրապատկերների նախօրինակներին, դրանց հեղինակներին: Երկրորդ ենթագլխում ատենախոսը մանրամասն ներկայացրել է թեմատիկ փորագրապատկերների հեղինակի՝ Քրիստոֆել վան Ջիխեմ Կրտսերի (1581թ. Բազել-1658թ. Ամստերդամ) կենսագործունեությունը, վերջինիս հրատարակությունները և այդ հրատարակություններում զետեղված փորագրանկարների նախօրինակների արտացոլումը Վանանդեցիների հրատարակություններում:

Աշխատանքի երրորդ գլուխը բաղկացած է չորս ենթագլխից (**«Վանանդեցիների հրատարակությունների թեմատիկ պատկերները»**): Այս գլխում ատենախոսը անդրադարձել է հիմնականում 1702թ. հրատարակված Շարակնոցում և 1705թ. Ժամագրքում զետեղված սուրբգրային թեմաներով փորագրանկարներին, որոնց մեծ մասը նաև արտացոլված է Վանանդեցիների մյուս հրատարակություններում: Այս գլխի երեք ենթագլուխներում հեղինակը

տեխնիկական, ոճա-կերպարային, պատկերագրական մանրամասն վերլուծության է ենթարկել Վանանդեցիների հրատարակությունների սուրբգրային թեմաներով փորագրապատկերները: Զուգադրահամեմատական քննության մեթոդով ատենախոսը ներկայացրել է յուրաքանչյուր փորագրապատկերի նախօրինակը, հեղինակին և այդ պատկերների արտացոլումը հայ ուշ միջնադարյան արվեստում (ձեռագրերում, որմնանկարներում, կիրառական արվեստում): Մանրամասն դիտարկված են յուրաքանչյուր տեսարանի կանոնական, նոր, արևմտյան և արևելաքրիստոնեկան պատկերագրական գծերը: Առանձին ենթագլխով հեղինակը բարեխղճորեն ներկայացրել է Վանանդեցիների հրատարակությունների փորագրանկարների ոճական և կերպարային բնութագիրը:

Աշխատանքն ավարտվում է քննության արդյունքներն ամփոփող եզրակացություններով:

Կարծում եմ, որ Արփինե Սիմոնյանին հաջողվել է իրականացնել իր առջև դրված խնդիրները՝ ներկայացնել Վանանդեցիների հրատարակությունների գեղարվեստական հարդարանքի ամբողջական պատկերը և բացահայտել փորագրանկարների հեղինակներին, դրանց նախօրինակները, վերջիններիս ստեղծման եղանակը, ոճական, կերպարային, գեղարվեստական առանձնահատկությունները, պատկերագրությունը, խորհրդաբանությունը, առանձնացրել դրանց բնորոշ գծերը: Արփինե Սիմոնյանը փորձ է արել վեր հանել Վանանդեցիների արժանի տեղը ոչ միայն հայ, այլև եվրոպական տպագրարվեստում:

Ակնհայտ է աշխատության գործնական նշանակությունը՝ հետազոտության արդյունքները կլրացնեն ինչպես հայ արվեստի պատմության ու տեսության, մասնավորապես՝ գրատպության, հայ գրքի և հայ-եվրոպական փոխառնչությունների պատմության էջերը, այնպես էլ կարող են հիմք դառնալ նմանատիպ նոր ուսումնասիրությունների համար և ընդգրկվել բուհական դասընթացներում:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են ութ տպագիր հոդվածներում: Սույն թեմային վերաբերվող բաժիններից մեկը ատենախոսը մասամբ հրատարակել է պատկերագիրք-ուսումնասիրության տեսքով:

Ատենախոսությունը հարուստ է իր բազմակողմանիությամբ և նորահայտ նյութերով, որոնք աշխատանքի հանդեպ վստահություն են ներշնչում: Հեղինակի գիտելիքները և վերլուծական հմտությունը, նոր նյութի առատությունը վկայում են, որ ատենախոսությունը հարուստ է օգտագործված նյութերի բազմակողմանիությամբ, ուստի այն արժանի է ինչպես պաշտպանության, այնպես էլ հրատարակման:

Աշխատանքի վերաբերյալ դիտողությունները կրում են տեխնիկական բնույթ: Առաջարկում եմ ատենախոսին հետագա իր ուսումնասիրության մեջ ընդգրկի Վանանդեցիների հրատարակությունների այն փորագրապատկերները, որոնք չեն ներառվել ատենախոսության մեջ:

Գտնում եմ, Արփինե Արմենի Սիմոնյանի ատենախոսությունն իր գիտական պատշաճ մակարդակով լիովին համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ

կետի՝ «գիտության տվյալ բնագավառում կարևոր նշանակություն ունեցող խնդրի լուծում» պայմանին, իսկ ատենախոսը միանգամայն արժանի է ԺԷ. 00.03-«Կերպարվեստ, դեկորատիվ և կիրառական արվեստ, դիզայն» մասնագիտության գծով արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը, ինչի համար էլ միջնորդում եմ ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի 016 մասնագիտական խորհրդի հարգարժան անդամներին:

**Պաշտոնական ընդդիմախոս՝  
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,  
արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր՝**



**Վիգեն Ղազարյան**

ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի կերպարվեստի բաժնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Վիգեն Ղազարյանի ստորագրությունը վավերացնում եմ՝

**Արվեստագիտության 016 մասնագիտական խորհրդի գիտքարտուղար՝  
ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի տնօրենի տեղակալ,  
արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր՝**



**Աննա ԱՍԱՏՐՅԱՆ**

31 օգոստոսի 2020թ.

